

Կ-057-24.08.2012-ՏՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-11-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածը լրացնել 11-րդ և 12-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը հյուրանոցային տնտեսության օբյեկտի հստակ տարբերակման և ներկայացման նպատակով հյուրանոցային տնտեսության օբյեկտի՝ սպառողների համար դրսից տեսանելի հատվածում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտը ինտերնետային կայքում կամ գովազդային նյութերում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով պետք է նշի հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակը:

12. Արգելվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտն իր տեսակին չհամապատասխանող տեսակով ներկայացնելը կամ գովազդելը:»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը

1. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում:

2. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումն իրականացվում է կամավոր սկզբունքով:

3. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումն իրականացնում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած որակավորման կարգերին և ընթացակարգին համապատասխան:

4. Որակավորում ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտներին տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի վկայական:

5. Որակավորում կարող են ստանալ հյուրանոցային տնտեսության այն օբյեկտները, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային նորմերի և սույն օրենքով սահմանված նվազագույն պահանջներին:

6. Հյուրանոցները որակավորվում են հնգաթև աստղերով նշվող մեկից հինգ աստղանի և հնգաթև աստղերով ու Դեյյուքս գրառմամբ նշվող հինգ աստղանի Դեյյուքս որակավորման կարգերով:

7. Մոթելները որակավորվում են հնգաթև աստղերով նշվող մեկից հինգ աստղանի որակավորման կարգերով:

8. Հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները որակավորվում են հնգաթև աստղերով նշվող մեկից չորս աստղանի որակավորման կարգերով:

9. Հանգստյան կամ մասնագիտացված ճամբարները կամ տները, պանսիոնները, զբոսաշրջային բնակատեղիները, ճամբարային բնակատեղիները, զբոսաշրջային տները որակավորվում են հռոմեական թվանշաններով նշվող երրորդից առաջին կարգի որակավորման կարգերով:

10. Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձը հյուրանոցային տնտեսության օբյեկտի հստակ տարբերակման նպատակով հյուրանոցային տնտեսության օբյեկտի՝ սպառողների համար դրսից տեսանելի հատվածում, ինչպես նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտը ինտերնետային կայքում կամ գովազդային նյութերում ներկայացնելիս պետք է օգտագործի որակավորման կարգի նշանը, եթե հյուրանոցային տնտեսության օբյեկտը սահմանված կարգով ունի համապատասխան որակավորման կարգ:

11. Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգի նշանների օգտագործման ձևերն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

12. Արգելվում է որակավորման կարգի նշան օգտագործել այն հյուրանոցային տնտեսության օբյեկտը ներկայացնելու կամ գովազդելու նպատակով, որը չունի օգտագործվող նշանին համապատասխանող որակավորման կարգ:

13. Արգելվում է սույն օրենքով նախատեսված որակավորման կարգի նշաններին մոլորեցնելու աստիճանի մեծան նշաններ օգտագործելը հյուրանոցային տնտեսության օբյեկտ ներկայացնելու կամ գովազդելու նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «տարանցիկ երկրներում» բառերից հետո լրացնել «վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման, ինչպես նաև» բառերով:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը «ապահովագրության պայմանների» բառերից հետո լրացնել «Ժամանման կամ տարանցիկ երկրներում վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման, առողջության հետ կապված սահմանափակումների և պահանջների» բառերով:

Հոդված 5. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ, 12-րդ մասերի, 10-րդ հոդվածի 10-րդ, 12-րդ կամ 13-րդ մասերի պահանջների խախտումն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված բազային տուրքի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ արդարադատության և ՀՀ առողջապահության նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարված փոփոխությունների և լրացումների

h/h	Առաջարկության (փոփոխության, հեղինակը) լրացման	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը
	1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	1.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիր 2.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նախագծի 1-ին հոդված 3.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	1«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով, քանի որ նախագծի 1-ին հոդվածի համաձայն օրենքի 9-րդ հոդվածը լրացվում է 11-րդ և 12-րդ մասերով: 2.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ձիշտ նշել օրենքի թիվը, մասնավորապես՝ «ՀՕ-11» թիվն անհրաժեշտ է փոխարինել «ՀՕ-11-Ն» թվով: 3.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «գ՝ կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «գ.1 կետով» բառերով:	1.Կատարվել է համապատասխան փոփոխություն: 2.Կատարվել է համապատասխան փոփոխություն: 3.Կատարվել է համապատասխան փոփոխություն:

		4.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ	4.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներում «պարբերությունը» և «պարբերությունում» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասը» և «մասում» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:	4.Կատարվել է համապատասխան փոփոխություն:
		5.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 6.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված	5.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-րդ ենթակետով, հետևյալ բովանդակությամբ. 2.1) «Ժամանման կամ տարանցիկ երկրներում՝ վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման մասին տեղեկատվություն»: 6.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի «ապահովագրության պայմանների» բառերից հետո լրացնել «վարակիչ հիվանդությունների, առողջության սպառնալիքների և դրանց կանխարգելման մասին» բառերը:	5.Նախագիծը լրացվել է 3-րդ հոդվածով՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախատեսելով համապատասխան լրացում: 6.Նախագիծը լրացվել է 4-րդ հոդվածով՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նախատեսելով համապատասխան լրացում: